ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնք
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7, /0232/3-10-26 ashtarakmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2025 թվականի N 454-Ա

«ՌԻՉ ԳԱԶ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշտարակի համայնքապետարանի կողմից 24.01.2025 թվականին հայտարարված ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/1 ծածկագրով սեղմված բնական գազի ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՌԻՉ ԳԱԶ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում սպանձնած պարտավորությունը, այն է՝ Մասնակցի իրական շահառու հանդիսացող անձը, հանդիսանում է «ՌԻՉ ԳԱԶ» /ՀՎՀՀ00465489/ և «ԷՔՍՊՐԵՍ ԳԱԶ» /ՀՎՀՀ04228115/ ՍՊ ընկերությունների իրական շահառու, որոնք հայտերի բացման դրությամբ ներառված են գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 121-րդ կետի պահանջների՝ «Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման»:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերը նշված իրավական նորմը՝

Մասնակցի կողմից ներկայացված գնման հայտը գնահատել է անբավարար և մերժել, որը հանգեցրել է գնման ընթացակարգին վերջինիս մասնակցության դադարեցմանը:

Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 05.02.2025թ.-ին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. «ՌԻՉ ԳԱԶ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

2025 թ. փետրվարի 17
ք.Աշտարակ